գարարձականում եկեղեցուջ, կամ առ Տօմինիքանս։... Իսկ սպասաւորն երթեալ եգիտ զոթեւան առ Տօմինիքանս, բայց դժուարութեամբ. զի խղճէին, զուցէ խնդրակք զկնի հասեալք և առ նոսա գտեալք զիս, ինքեանք ինչ սասպարտք գտանիցէին։ Երեկոյին ուրեմն գնացի առ նոսա. և Փաթէր փըրիօրն Ֆիլիպ Յանթովից, առ ի խուցն իւր հրաւիրեաց ի խօսակցութիւն. և ի մէջ այլոց բանից՝ ասէ. Վանքս աղքատ է, և սակաւ եղբարք բնակեմք, ոչ ունելով զդիպաւորութիւն, և ոչ զանկողինս բաւական։ Իբր կամէր այսու առբասրել զինքն, եթէ ոչ պաշտպանիցէր ինձ. կամ զկերլի կամ զանկողինս. և այնպէս գալջորէն, մանաւանդ թէ ցրտաբար խօսէր, մինչ զարմանալ իմ։ Ապա հանեալ զտուփ թապաքին յազնիւ յոսկրէ կրիայի, արծաթակազմն և փայլուն յոյժ, և յունչսն էառ զհոտ ախորժ խառնուածոց թապաքին, խակոյն փոխեալ զկիրս ոգւոյն, սկսաւ ջերմաւ սիրով խօսել, և կարեկցաբար և փոյթ կոչեաց զպաշտօնեայն, և հրամայեաց զբարձս և զանկողին իւր փետրալի տանել ի խուցն ինձ պատրաստեցեալ։ Ասեմ ընդ միտս. Ո՛վ տուփ, զօրաւորագոյն ես դու ի շարժել զսիրտ առ գութ, քան զտկարութիւնս իմ, և զհիւծեալ ծերութիւնս։ Ցետ փոքու մոյ ողջունեալ զնա՝ գնացի. և նպաստիւ փափկագունի անկողնոյն քրտնեալ ի գիշերի՝ ցրուեցաւ ջերմութիւնս, և առաւօտուն գտի և զվէրս առողջացեալս, և զոհացայ զբարերարութենէն Աստուծոյ։

14. Ի կիրակէի առաւօտուն եաու փոքրաւորին զլօթիս 10, զի հոգայցէր զպակասութիւն իւր. այս է, զկոշիկս, շապիկս, և զայլս պիտոյս, նա և զկերակուր և զըմպելի. զի վանքն և ոչ զգարէջուր պաշտպանէր մեզ. մանաւանդ թէ և զպոյտս կամ զդորակ ջրոյ կամ զրգալ մի կամ զփայտ ոչ կամեցան տալ. զորս ամենեսեան հարկ եղեւ գնել. և մնաց միայն 3 զլօթի առ իս։ Եւ մինչ խորհէի, թէ զիարդ զառաջիկայ ճանապարհն փաղահետեւիլ կարիցէի այնու փոքր դրամով, զի թէ և ունէի ընդ իս մատանի մի շափիւղայ, ո՞վ կարէր անդ ոք գնել, կամ ի գրաւ առնուլ. ահա նախատեսութեամբն աստուածայնով ժամանեաց անդր փոէզիտէնս Թրինաթարաց (նախագահ՝ կամ առաջնորդ Trinitari միանձանց), Փաթէր Մաթիաս սպանիացի, նախածանօթ իմ. որում զգացուցին Տօմինիքանք, թէ իցէր առ նոսա ոմն փախստական ի Լէոպոլսոյ. բայց զսմ ոք լինելն տգիտանային, թէ եկեղեցական կամ աշխարհական իցէր. և խնդրեցին այց առնել և գիտել։ Իբրեւ եմուտ ի ներքս՝ խակոյն ծանեաւ, թէ և այլակերպեցեալ իցէի. և փարեալք զմիմեանս ոգեագուրելով խնդութեամբ, ոչ առանց արտասուաց, հարցանէր զվանէրն և զորպէսն գալոյս. զոր իբրեւ բացատրեցի պարագայիւք հանդերձ, յայտնեցի իբրեւ բարեկամի և զչքաւորութիւնս. որ մեծաւ սիրով մտերմականաւ մխիթարեալ զիս, մատոյց զինքն պատրաստ ի ընուլ զպակասութիւնս։ Մինչ պատաղեցեալք էաք ի ճառումն դիպուածոյն Լէոպոլսոյ, եկն ի վերայ Փաթէր Ցիրինա՝ կվարտիան Ֆրանչիքանաց Լէոպոլսոյ, նմանապէս ծանօթ իմ. ահեաց տատէն խնդութիւնս, և մոռացումն եղեւ վշտա-